

գործութիւնը՝ ձշմարիտ է, այդ բանի համար անհրաժեշտ
է հաւատալ իւր հոգւոյ էռթեանը—աստուածային մաս-
նիկին, որը ենթակայ չէ ոչ փոփոխութեան, ոչ նուազ-
ման, ոչ էլ տանջանքների կամ ոչնչացման։ Միայն, ի նը-
կատի ունենալով ձեր նամակը, հիմք ունիմ կարծելու, որ
հաւատում էք այդ բանին. իսկ եթէ չէք հաւատում, վերջ
ի վերջոյ այդ բանին կգաք։

Թող Աստուած օգնէ ձեզ և ամենից առաջ նա, որ
ձեր մէջն է:

U. S.

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ԱՐԻՍՏՈ ԵԿԵՂԵՑԻ

Տարւոյս վետրուար ամսին մէկը Պետերբուրգի Խսահակեան
տաճարից, աղքատութիւնից ստիլուած՝ գողացել էր յիսուն
հազարի արժողութիւն ունեցող մարդարիսներ, որոնք յետոյ
դաշտնի սստիկանութեան ձեռք առած խիստ միջոցներով ա-
ռանց պակասութեան գտնուեցան։ Գողացողը յանձնուեցաւ
դատարանի, որը գատապարտեց նրան եօթը տարուայ տաժա-
նակիը աշխատանքի։ Այս առթիւ „Новости“-ի մէջ հետևեալ
դիտողութիւններն ենք կարդում։ Արդեօք եկեղեցիներում և
վանքերում հարկաւո՞ր են արժեքաւոր իրեր։ Այն մարզիկ, որոնք
թէև ոճրագործութեան ծանօթ չեն, բայց թոյլ կամք ունին,
գայթակղւում են եկեղեցիների մէջ այդպիսի թանկադին իրեր
տեսնելով։ Նոյն բանն է պատահել և յիշեալ գողի հետ, որը
հրապութուելով Խսահակեան տաճարի հարստութիւնից, չար-
միաք յշացաւ, բայց բարեբազդաբար չկարողացաւ այդ մտա-
դրութիւնը գլուխ բերել։

Հարաւային Ռուսաստանի գերմանական գործարանատներում և ընդհանրապէս գերմանական մեծ ձեռնարկութիւնների մէջ ըանուոր դասակարգը պատկանում է ուղղափառ գաւառնութեան։ Խոկ այն հանգամանքը, որ ստիպում է ուղղափառ գիւղացի ծնօղներին իրենց երեխաներին գերմանական ծառայութեան տալու, արհեստանոցների պակասութիւնն է, որտեղից պէտք է դուրս գային գարբիններ, կօշկակարներ ելն։ Այսպիսի արհեստաւորաց գպրոցների կարսեքը ոչ միայն քաղաքներում, այլ և գիւղերում տարեցարի աճում է։

Ամէն մի գերմանացի տանտէր ծառայութեան կանչելով մի ուղղափառ երեխայի, նախ և առաջ ստիպում է նորան ձրե ծառայել 5—6 տարի, այսինքն 15—16 տարեկանից սկսած մինչև կատարեալ հասակ ունենալը. իսկ փոխարէնը տանտէրը պարտաւորւում է ծառային միայն կերակրել, հագցնել և սուվորեցնել։ Տարիներ անցնելուց յետոյ արդէն տանտէրը ամսական 10—15 մանէթ ռոճիկ է կապում և այդ ռոճկով էլ ռուսը ծառայում է ուրախութեամբ։ Սակայն մարմնական զրկանքը այնքան ցաւ չի պատճառում, որչափ հոգեկան զրկանքը՝ որ տնենում է ուղղափառ երիտասարգը գերմանական մթնոլորտում։ Երեխաները, գերմանական որևէ կոլոնիայում առանց դրսի աշխարհի հետ շփուելու մնալով մի քանի տարի շարունակ, բոլորովին սառում են մայթենի լեզուից, մոռանում են ազգային ոսկորութիւնները, կրօնական արարողութիւնները և մինչև իսկ սկսում են արհամարհանքով նայել ուղղափառութեան վերայ։ Դորա փոխարէն նոքա սովորում են գերմանական լեզուն, տօներին յաճախում են նոցա աղօթատները, ուշադրութեամբ լսում են պաստրների քարոզները։ Խոկ երբ նոյն այդ գաստիարակ գերմանացիները այցելում են իրենց աշխատաւորների ծնօղներին, չեն քաշւում գովարանելու բողոքականութիւնը և վատարանելու ուղղափառութիւնը, ծաղրելով ռուս եկեղեցու քարդ կարգերը, ռուս հոգեորականութեան թոյլ կողմերը, յաճախակի տօները, պասերը ելն։

Այս բոլորն ի նկատի առնելով՝ կասկածի տեղ չի մնում, որ գերմանական գաստիարակութիւնը մեծապէս նպաստում է զանազան կրօնական աղանդների յառաջ գալուն, ի թիւս որոց շտունդիզմի, որի դէմ տարիներից ի վեր կռուում է ոչ միայն հոգեորականութիւնը, այլ և քաղաքական իշխանութիւնը։ Եւ լրագիրը այս բոլորի միակ գարման համարում է գիւղական հոգեորականութիւնը, որ իւր արթնութեամբ և աշխատանքով կարող է իւր հօտը ուղղափառ կրօնի և բարոյականութեան մէջ պահել։

Հարուստ եկեղեցիները դժուար է ապահովել խիստ ջերմեռանդ ազօթաւորներից, որոնցից մէկն էլ գատապարտեալն էր: Այդ պատճառով էլ յօդուածագերը առաջարկում է, որ շափազանց արժէքաւոր նուիրաբերութիւնները որոշ նովատակի համար դորձ գրուին, որպէս զի ի մի ժողովուելով՝ իրենց փայտով ազօթաւորի մէջ չար միտք չծնեցնեն:

—Քոլորին յայտնի է այն յաջողութիւնը, որ ունեցաւ Ռուսական եկեղեցին 1898 թուին, երբ նեստորական եպիսկոպոս Մար—Յովհաննը քսան հազար ասորիների հետ մտաւ Օթովորով եկեղեցու գիրկը, թողնելով տասնեակ գարերի կեանք ունեցող մայրենի եկեղեցին: Նեստորական եկեղեցուն հաւատարիմ մի հատուած միայն քաշուել է Քիւրդիստանի անմատչելի սարերը, այնտեղ ազօթելու մայրենի եկեղեցու յարկի տակ:

Ռուսաց եկեղեցին Ռւրմիայում գտնելով իրեն հետևող այսպիսի մեծ քաղմութիւն՝ ընական է, որ նրա նիւթական և քարոյական կարիքներն էլ հոգալու հարկաւորութիւնը զգաք: Վերջին ժամանակները քարոզիչներ են ուղարկելում այդ երկու օգնութիւնները հասցնելու բայց բանն այն է, որ ուուս քարոզիչները ամէն մի քայլում հարկադրուած են ընդհարուելու ամերիկական միսիոնարների հետ, որոնք ունենալով աւելի հարուստ միջոցներ՝ աւելի և յաջողութիւն են ունենում: Պերք. Բետ. նկարագրում է, թէ ինչպիսի եռանդով են գործում ամերիկական միսիոնարները: Ամերիկական պրեսբիտերեան եկեղեցու ներկայացուցիչները առաջին անգամ Ռւրմիա ոտք են կոխում 19-րդ դարու երկրորդ քառորդին: Նոքա շատ չանցած այստեղ տպարան բանալով տպում են կրօնական բովանդակութեամբ գըքեր: Ասորական լեզուով նոր Կոտակարան են տպում նիւ—նօրկում և տարածում ժողովրդի մէջ: Ներկայումս նոքա համարեա թէ ըոլոր գիւղերում իրենց հետևողներն ունին և իրենց եկեղեցիները, ուր ժամապաշտութիւնը կատարուում է անխափան կերպով: Ունին այդ գործի համար պատրաստուած յատուկ քարոզիչներ՝ բոլոր գիւղերում գլուխներ են պահում, որոնց մէջ գաս են աւանդում իրենց մօտ կըթուած ասորիներ: Երիցականների տպարանը անդադրում գործում է և ամէն ամիս ի լոյս է ընծայում «Լուսոյ ճառագայթ» հանդէսը, որ արդէն բաւական ապացոյց է, թէ նոցա գործունէութիւնը ինչ աստիճանի յաջողութեամբ առաջ է ընթանում:

—,,Պերք. Բետ.“ 14 համարում խմբագրական մի յօդուած է տպուած, որի մէջ հանգամանօրէն ցոյց է տրւում, թէ գերմանական կըթութիւնը ինչպէս է նպաստել շտունդիզմի առաջ գալուն:

— „Гражданнъ¹⁴ լրադրի վերջին համարներից մէկում հոգեորականութեան անգործութեան մասին մի յօդուած է տպուած: Լրադիրը հարցնում է. «Թնջ՛ռ ներկայումս եկեղեցին լուութիւն է պահպանում, մինչ վշացած և գայթակղութեանք քար դարձած հաղարաւոր հոգիներ այնպիսի յանդգնութեամբ մօտենում են նորան և չարտամտօրէն պահանջում, որ խունեկ ծխէ ետելիգենցիայի առաջ: Առութիւն պահպանող եկեղեցուն լրադիրը համեմատում է մի հարստութեամբ յզիւացած տաճարի, որի գուները թէկ գոց են, բայց պահպանները քնած են այնպէս խոր, որ գողը կարողանում է ջարդել պատուհանները, ներս մտնել և հարստութիւնը գողանալ:

Լրադիրը լուութեան պատճառը հետեւեալ կերպով է բացատրում. եկեղեցին նորա համար չէ լուռ, որ իւր որդւոց վերայ սառնասրաւութեամբ է նայում, այլ որ ինքը բռնուած է հիւանդութեամբ. իսկ այդ հիւանդութիւնը յօժար հոգու և տկար մարմնոյ մէջ եղած անհաւասարակշուութիւնն է: Ի՞նչ է եկեղեցու մարմինը: Եկեղեցու մարմինն են կաղմում հոգին արտայայտող միջոցները, նորա կենսական ստեղծագործութեան գործարանները, նորա ներգործութիւնը մարդոց վերայ. կարճ ասած, եկեղեցու մարմինն է նորա կառավարութիւնը: Քրիստոս Գեթսեմանի պարտիզում աղօթելու ժամանակ վշտահար արիւն քրաբինք էր մտել, մինչ աշակերտները մի ժամ անգամ արթուն մնալու կարողութիւն չունեցան: Խնչու չխոստովանել, որ Եկեղեցին էլ առաքեալներից աւելի թոյլ գտնուելով այսօր, իւր ժողովրդի կեանքի ամենածանը սոսպէին քուն է մտել, երբ վաստակեալների և բեռնաւորների ամբողջ շարքեր գալիս են դէպի նա և այդ քնից զարթեցնել կամենում: Խնչու չհաւասար, որ նա կզարթներ վերջապէս այդ քնից և միջոց կզանէ հոգեսր կարիքներ հոգալու և կազդուրելու հոգեսր զինուորութեան սպառուած ոյժերը:

— „Աերք. Եթէ¹⁵ 13 համարում մի հետաքրքրական հարց է տրուած, որ աւելի հետաքրքրական է իւր պատասխանով: — Կարելի՞ է արդեօք հըէային աճուրդով տալ գիւղում եղած եկեղեցական ջրաղացը: — Թէկ օրէնքների մէջ հըէաների նկատմամբ այդպիսի սահմանափակում չի արուած, բայց դորձնական կեանքում ըսլոր միջոցները պէտք է ձեռք առնել, որպէս զի եկեղեցական գոյքը այլահաւատների ըը յանձնուի շահագործելու, մանաւանդ հըէաներին: